ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մուտք գործելով կամ օգտագործելով այս կայքէջը ցանկացած եղանակով, դուք համաձայնվում եք, որ պարտավոր եք հետևել ստորև նշված և սույն կայքի օգտագործմանը վերաբերող այլ պայմաններին և ծանուցումներին:

Ստորև ներկայացված պայմանները հանդիսանում են 10 ԻՔՍ խանութների ցանցի (այսուհետ նաև՝ Ընկերության) և https://10xmarket.am կայքում (այսուհետ նաև՝ կայքում) առաջարկված հնարավորությունները ստացող կամ դրանք ստանալու ցանկություն հայտնած ֆիզիկական անձի (այսուհետ՝ Անձի) միջև կնքված համաձայնության (ծագող իրավահարաբերության) ընդհանուր պայմանները.

- Համաձայնությունը կնքված է համարվում, երբ Անձն իրականացնում է հետևյալ անհրաժեշտ բոլոր գործողությունները. Կայքի <<ԳՐԱՆՑՈՒՄ>> բաժնում նշված դաշտերերում ճիշտ (իրական) տվյալների լրացում և անհրաժեշտ բոլոր կոճակների սեղմում: Նշված բոլոր գործողությունների կատարմամբ միայն Անձն արտահայտում է իր ցանկությունը (կամքը) տվյալ համաձայնությունը կնքելու համար:
- Կայքում առկա և ստորև ներկայացված պայմանները կարող են լրացվել և/կամ փոփոխվել Ընկերության կողմից՝ իր հայեցողությամբ:
- Ընկերությունը պարտավորվում է սույն համաձայնությամբ սահմանված կարգով համապատասխան հնարավորությունը տրամադրել բացառապես Կայքում նշված Անձին:

Խնդրում ենք ուշադիր կարդալ օգտագործման պայմանները (այսուհետ՝ պայմաններ): Եթե չեք ընդունում սույն պայմանները, ապա մի օգտվեք այս համակարգից և մի օգտագործեք այս կայքը:

ԿԱՅՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Ստեղծել հարթակ որտեղ կկիրառվի ռեֆեռալ համակարգը ինչը հնարավորություն կընձեռի Անձին կատարել ոչ միայն հարմարավետ և մատչելի գնումներ, այլև՝ ունենալ հնարավորություն իր և իր ընկերների կատարված գնումների արդյունքում կուտակել միավորներ, որոնք կվերածվեն ՀՀ դրամի, կվերադարձվեն Անձին և վերջինս հնարավորություն կունենա իր հայացողությամբ տնօրինել դրանք:

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՌԵՖԵՌԱԼ ՀԱՄԱԿԱՐԳ

Գրանցվելով ՌԵՖԵՌԱԼ համակարգում դուք հանդիսանում եք Ընկերության կողմից տրամադրված հնարավորության սպառողը:

Մեկ ամսվա ընդացքում կատարելով գնումներ մեր խանութ սրահներից առնվազն 50.000 ՀՀ դրամի չափով Ընկերությունը պարտավորվում է հնարավորություն ընձեռնել Անձին իր կատարած գնումների 2% (երկու տոկոս)-ի չափով ռեֆեռալ հաշվին կուտակված միավորն օգտագործել Ընկերությունից նոր գնումներ կատարելու համար կամ վերադարցնել կուտակված միավորներին համարժեք ՀՀ դրամը:

ՌԵՖԵՌԱԼ համակարգը թույլ է տալիս կուտակել միավորներ ոչ միայն կատարելով գնումներ, այլև գեներացնել կուտակային միավորներ ձեր իսկ կողմից խանութ հրավիրված այլ անձանց գնումներից, որոնք նույն կերպ կարող են օգտագործել կամ վերադարձվել, մասնավորապես՝

- 1-ին ընկեր (ձեր կողմից ձեր ռեֆեռալ կոդով գրանցված ընկեր), այս անձի կատարած գնումներից ձեր ռեֆեռալ հաշվին կուտակվելու է 1%(մեկ տոկոս)-ի չափով միավոր:
- 2-րդ ընկեր (1-ին ընկերոջ կողմից իր ռեֆեռալ կոդով գրանցված ընկեր) այս անձի կատարած գնումներց ձեր ռեվեռալ հաշվին կուտակվելու է 0.6% (զերո ամբողջ վեց տոկոս)-ի չափով միավոր:
- 3-րդ ընկեր (2-րդ ընկերոջ կողմից իր ռեֆեռալ կոդով գրանցված ընկեր) այս անձի կատարած գնումներց ձեր ռեվեռալ հաշվին կուտակվելու է 0.4% (զերո ամբողջ չորս տոկոս)-ի չափով միավոր:

Կուտակված միավորներին համարժեք ՀՀ դրամի մեջ ներառված են նաև հարկերը (հարկային պարտավորությունները), որոնք Ընկերությունը որպես հարկային գործակալ հաշվարկում, պահում և Անձի փոխարեն փոխանցում է ՀՀ պետական բյուջե:

ԿԱՐԵՎՈՐ ՊԱՅՄԱՆ՝ գերազանցելով նվազագույն 50,000 ՀՀ դրամ և ավելին գնումների համագումարը մեկ ամսվա ընդացքում այս միավորներն ակտիվանում են և դառնում են հասանելի Անձի համար: Չկատարելով նվազագույն 50,000 ՀՀ դրամի չափով գնումներ մեկ ամսվա ընթացքում այս միավորները չեն ակտիվանում և զրոյանում են հաջորդ ամսվա սկզբում: Զրոյացումը չի վերաբերվում նախորդ ամիսներին կուտակված միավորներին, որոնք արդեն ակտիվացել են և հասանելի են Անձին, այլ տվյալ ամսում կուտակած միավորներին, որոնք դեռևս չեն ակտիվացել 50,000 սահմանված շեմը չգերազանցելու պատճառով:

6 ամիս անընդմեջ համակարգից չօգտվելու դեպքում Անձը դուրս է գալիս համակարգից, ջնջվում է Անձի անձնական էջը և զրոյանում է խմբում զբաղեցված իր դիրքը, որը վերականգնման ենթակա չէ, այլ կերպ ասած դադարում է սույն համաձայնությամբ ծագած իրավահարաբերությունը՝ իր իրավունքներով և պարտականություններով: Եթե 6 ամիս անընդմեջ համակարգից չօգտվելու պատճառով Անձի էջը ջնջվել է, ապա ցանկության

դեպքում միայն հնարավոր կլինի համակարգում նորից գրանցվել և ձևավորել նոր ընկերների խումբ:

Ռեֆեռալ հաշվին կուտակված միավորը Ընկերության կողմից վերադարձվում են տարվա եռամսյակում, իսկ եռամսյակների միջև լինում են մեկամսյա դադարներ, որի ընթացքում վերադարձ չի լինում:

ԳՈՒՄԱՐԻ ՎԵՐԱԴԱՐՁ

Կուտակված գումարների վերադարձի համար անհրաժեշտ է Ձեր անձնական էջում ներկայացնել հայտ նշելով գումարի չափը: Հայտի ներկայացումից հետո ձեզ տրամադվելու է ստացական կոդ, այնուհետև մոտենալով մասնաճյուղ անհրաժեշտ գումարը ստանալու համար նշել ստացական կոդը և աշխատակցի կողմից ստացական կոդի հաստատումից հետո ստանալ գումարը:

ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գաղտնիության քաղաքականություն
Ընկերությունը գերակայություն է համարում Անձի տվյալների (այդ թվում՝ Օգտագործման տվյալների) գաղտնիության պահպանումն ու պաշտպանությունը: Ստորև ներկայացվում են նշված տվյալների հասկացությունները՝

Անձի տվյալներ - անձին վերաբերող ցանկացած տվյալ (տեղեկություն), որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել վերջինիս:

Օգտագործման տվյալներ - Օգտագործման տվյալներն էլեկտրոնային համակարգի միջոցով ինքնաշխատ կերպով հավաքագրված տվյալներ են, որոնք ստացվում են Կայքի օգտագործման արդյունքում:

Անձը տալիս է իր համաձայնությունն իր վերոնշյալ տվյալների հավաքագրման, մշակման և օգտագործման համար:

Ընկերության կողմից հավաքագրված վերոնշյալ տվյալներն մշակվում և օգտագործվում են Անձի և իր միջև կնքված համաձայնության կատարման և դրա բարելավման նպատակով, ինչպես նաև՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ նպատակներով:

Եթե Անձը ունի հավելյալ հարցեր գաղտնության քաղաքականության վերաբերյալ, ապա կարող է կապվել մեզ՝ զանգահարելով 098 044 457, 095 044547 կամ այցելել մեր մասնաճուղերից որևիցե մեկը;

Ընկերությունը Տվյալները նաև օգտագործում է Անձի հետ կապ հաստատելու և տեղեկություն փոխանցելու համար, որը բխում է Անձի հետաքրքրությունից, օրինակ՝ նպատակային գովազդները, ծանուցումները և հաղորդակցությունը, որոնք ուղարկվում են Անձի գործողություններին

համապատասխան: Այնուամենայնիվ, Անձն կարող է կապվել մեզ զանգահարելով 098 044 457, 095 044457 հեռախոսահամարներով կամ այցելել մեր մասնաճուղերից որևիցե մեկը, եթե ցանկանում է դադարեցնել նման տեղեկատվության ստացումը կամ շարունակել մեզ հետ համագործակցությունը:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

Որպես այս կայքի օգտագործման պայման՝ Անձը համաձայնում և երաշխավորում է, որ՝

- Օգտագործել այս կայքը սույն պայմաններին համաձայն,
- Օգտագործել այս կայքը միայն օրինական նպատակներով,
- Տրամադրված բոլոր տվյալները ճշմարիտ, ճշգրիտ և ամբողջական են,
- Ընկերությունն իր հայեցողությամբ կարող է արգելափակել Անձի մուտքը դեպի այս կայք ցանկացած պատճառով և իր հայեցողությամբ,
- Սույն կայքի բովանդակությունն ու պարունակվող տեղեկատվությունը պատկանում է Ընկերությանը,
- Չկատարելու ցանկացած սպեկուլյատիվ, կեղծ կամ կեղծ պահանջարկի ակնկալիքով որևէ գործարք:
- Մուտք չգործել, չդիտարկել կամ չպատճենել այս կայքի ցանկացած բովանդակություն կամ տեղեկատվություն՝ օգտագործելով ցանկացած բոտ, ռոբոտ, սարք, քերիչ կամ այլ ավտոմատացված միջոց կամ որևէ սարք՝ ցանկացած նպատակով, առանց ընկերության գրավոր թույլտվության,
- Ձեռնարկել ցանկացած գործողություն, որն պարտադրում է կամ կարող է պարտադրել Ընկերության ենթակառուցվածքների անհիմն կամ անհամաչափ մեծ բեռ կատարել խորը հղում այս կայքի ցանկացած մասի ցանկացած նպատակով, առանց Ընկերության գրավոր թույլտվության;
- «շրջանակային», «հայելային» կամ այլ կերպ չներառել (չարտահանել, չներբեռնել) այս կայքի ցանկացած մասը որևէ այլ կայք՝ առանց Ընկերության նախնական գրավոր թույլտվության:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել մեզ՝